133

1. Տերը լույս ու փրկություն է մեզ համար,
Նրա կամքը բարություն է մեզ համար,
Այնքան սիրեց, տվեց կյանքը մեզ համար,
Թե հավատանք, կապրենք կյանքով հավիտյան:

Կգա մի օր՝ մեզ մոտ կիջնի Տերը մեր,
Իր արյունով սրբվածներիս տանի վեր,
Նա ուզում է՝ դու այդ խմբին միանաս,
Հավերժական փրկությունը ունենաս: (2)

2. Հիսուս անվամբ չարը հանի՛ր քո սրտից,
Թե ուժ չունես, ուժ ստացիր Հիսուսից,
Սիրի՛ր Աստծուն, Նա է տալիս սեր ու կյանք,
Հավատարիմ Աստծո առջև միշտ մնանք:

***
1. Սիրի՛ր, սիրի՛ր քո Տեր Աստծուն ամբողջ հոգով,
Ամբողջ սրտով և քո էությամբ:

Տիրոջ խոսքը լույս է աչքիս,
Տիրոջ խոսքը ճրագ է ոտքիս,
Պարարտություն՝ ոսկորներիս.
Դա Տիրոջ խոսքն է:

2. «Սիրի՛ր, սիրի՛ր ընկերոջդ քո անձի պես»,-
Հիսուսը մեզ այսպես պատվիրեց: